

4. ԻՐԱՊԱՏՈՒ ՋՐՈՒՅՑՆԵՐ

1(184). ՔԱՉԱԼ ՊԱՐԵԳԻՆԻ ՕՅԻՆԸ*

Մի ժամանակ մեր գյուղում երկու ծերունի մարթ կար: Դե առիասարակ հայերի ծերունիները, որ մեծանում են, կամ պետք ա խոզեր արածացնեն, կամ թե՛ անասունները: Էտ մարթիքը՝ երկու ծերունի մարթիք, խոզերը առաչներուն են անըն ջընը են անտառը, որ անտառընը արածացնեն: Օրը ամպոտ ա ըլլըմ, մուր, ամպամած: Խիտ անտառում տղընը մեկը մյուսին չեն տեսնըմ, խոզերը հետզհետե բարցրանըմ են՝ կերը փնտրելու, իսկ մարթիքն էլ՝ մեկը առաչին՝ խոզերի, մեկը՝ հեղկից, քյնըմ են: Մի քաչալ մարթ ենը ունեցըմ, անընը՝ Գարեգին, էտ Գարեգինը բախտի բերմամբ, թե պատահմամբ տա պատահըմ ա էտ անտառընը տղընը վերըն քյնալու ժամանակ, տղընացից հեռու, հա՛, էտ մարթը կանչըմ ա հեղկիցը.- Արա՛՝ Սարքի՞ս:

Ասըմ ա.- Յե՛յ, քաչալը հեյ անըմ ա:

- Արա՛, - ասըմ ա, -էտ ճարթվածը՝¹ հեռանըմ են է՛, ըռեխը ետ փակի, թող ըրածեն:

Ասըմ ա.- Արի՛, արի՛, արի՛:

Ասըմ ա, ինքը առաչ քյնըմ դիք անտառով դեբի վիրի լեռան տակը: Ծերունին մի քիչ քյնըմ ա, էլի կանչըմ.- Սարքի՞ս:

-Յե՛յ:

- Արա՛, ըրգարել եմ, է՛, կարըմ չեմ կյա՛մ, էտ ճարթվածը ետ տուր՝ ըրածեն:

- Արի՛, արի՛, իրես ըստեղ են, արի՛:

Քյնըմ ա, քյնըմ ա, քյնըմ ա, մեկ էլ որ լեռին դեմ ա առնըմ, կանգնըմ ա, հա՛ նորից ա կանչըմ.

- Արա Սարքի՞ս, էտ որդի՞ս ես:

Ասըմ ա.- Ըստեղ ե՛մ, ըստե՛ղ, արի, Սերգո դայի, ըստեղ եմ:

- Վա՛յ, ա՛, էտ հո՞վ ես: Արա՛, տո՛ լածիրակ շան տղա, - ասըմ ա, - էլի խափեցի՞ր ինձ:

Տղան թողըմ ա կյալի: Ծերունին ճանանըմ ա, թե չի ճանանըմ, չգիդեմ, երեկոյան, երփ որ կյալիս են գյուղը, էտ կանչող մարթը՝ խոզարած, քաչալանց տան տակովը անց կենալու ժամանակ, մա, իրոք, ենթադրըմ ա, որ անպայման սա ըլած կըլի, սա ա շախաղ մարթ էլի, էս քաչալն ա դիդարաթ էլի: Ասըմ ա.- Յե՛յ Գարեգին:

Ասըմ ա.- Յե՛յ:

- Արա սորի որդի՞ս ես ըլել:

Քաչալը հանդի անունը փոխըմ ա, մի ուրիշ հանդը թուրովին հեռու, ասըմ ա.- Էսինչ տեղն եմ ըլել:

- Յա՛, - ասըմ ա, - բա՛, բա ես ասի է՛, ես գիդացի, որ թե պես խելացի մարթն ինձ խափել չի: Ես ասեցի էտ շան տղեքը գյաղա-գյուղա մարթիք են, ընդու են ինձ խափել, բա ասիլ չե՛ս, էսորի կըլիսիս օյին ա եկէ՛լ:

- Յա՛, ի՞նչ ա եկել, Սերգո դայի:

- Արա՛, մի լածիրակը կար, մի շան որթին, - ասըմ ա, - էտ անդեր Դուգասանց թալիցը ոյեր քյնըմ ինը, - ասըմ ա, - քանի կանչեցի, - ասըմ ա, - ասեց՝ արի՛, քանի կանչեցի՝ արի՛, ա՛յ - մարթ, քյնացի, - ասըմ ա, -լեռան դեմ առա, ո՛չ - խոզ կա, ո՛չ Սարքիս կա, ո՛չ պան կա:

Ասըմ ա.- Բա էտ ո՞վ ա ըլել:

- Ա՛, դե, - ասըմ ա, - մի լածիրակ կըլի էլի, թե պես խելացի մարթը հու էտ պանը անիլ չի՛:

Ծերունին ետ իչնըմ ա գյուղամեչ, ընդեղ էտ խոսկը բացվըմ ա, մարթիք ասըմ են.

- Տա կա, չկա, քաչալն ա արել:

Ասըմ ա.- Չէ՛, ախպեր ջան, ես ընդեղ եմ ըլել, էն մարթը վերթըմ ա ուսըմ՞:

Ասըմ ա.- Չէ՛, նրա վերթումին մի հավատալ, մա յա արել:

Մարթը, իրոք, լսըմ ա էտ կողմնակի ասակոսաները ու կյալիս ա նորից կանչըմ.- Արա՛, Գարեգի՛ն:

¹ Խոսքը խոզերի մասին է (ծանոթ. բանահավաքի):

² Վերթըմ ուսել - երդվել (ծանոթ. բանահավաքի):

Ասըմ ա.- Դե՛յ, Սերգո դայի, ի՞նչ ա:

- Արա՛, - ասըմ ա, տո՛ լածիրակ շան տղա, որ տու ես ըլել, խի՞ չես ասըմ ես եմ ըլել:

- Ա, Սերգո դայի ջան, ես ընդեղ չեմ ըլել, ես...

- Է՛, - ասըմ ա, - թե, թե կիմանի տու ես, - ասըմ ա, - ես քու մորը կհայտի, - ասըմ ա, - բայց ի՞նչ անեմ, - ասըմ ա, - չիմացա, որ տու ես:

Վերջապես տախիտով խեխճ մարթին չար-չարըմ ա, եսօր էլ դեռ չարչարըմ ա:

2(185). ՓՈՔՐԻԿ ԳԱՐԵԳԻՆՆ ՈՒ ԴԱՐՁԱՆՂԱՍ ԵՐԱՅՈՐՆԵՐԸ

Մոտ ժամանակներում մեր գյուղացի երկու ըժողիս, հաղթանդամ մարթիք՝ եղբայրներ, աշնան բընա են ունացել իրանց հողամասը՝ հյուսուտ ծառերի արանքը: Կողմնակի մի տղա, փոքրիկ տղա՝ Գարեգին անունով, տա քյնացել ա էտ հյուսուտիցը որ հյուն քաղի, տղընը՝ երկու ախպերն էլ, եղել են իրանց բընըմ: Վեր են կալել, որ փըռնեն տղըն ծեծեն: Էտ փոքրիկ տղեն փոնել ա մեկին, որ մա եղել ա մախկին քյիխվա, լավ տղան, էտ փոքրիկը էտ քյիխվին լավ տվել ա, քան որ իմանաս, լավ ծեծել ա: Տըրա փոքր եխպայրը՝ Սերգո անունով մարթը, եկել ա, որ ախպորը, օքնությամ, որ էտ ցախելին ծեծեն: Որ եկել ա էտ մարթը, էտ կուռուր տղան էտ մեկին պառկած թող արել ա, հասել մոմե էլ փըռնել, պիրել տըրել մոմ վրա, երկուսին էլ հմի տալիս ա: Թե ոնց ա, տղայի ոտքը սայթաքել ա, իրան հավասարակշռությունը չի կարողացել պահի, ներքև ա սայթաքել, տղընը վեր են կալել փախել երկու ախպերով: Դժի էտ Սերգո անունով մարթը կանգնե ա իրան մեծ ախպորը:

- Շաքճ՛ր, փախի, Շաքճ՛ր, էտ լածիրակը կյալիս ա, փախի՛, փախի՛, Շաքճ՛ր, փախի՛, ես ատղուճով եմ, կիսանեմ, տու փախի՛, Շաքճ՛ր, եկավ տվուց, Շաքճ՛ր, փախի՛:

Վերջապես մոտ երեք-չորս կիլոմետրը տարածությամ վրա, բինայից էտ մարթիքը գույքով փախչեմ են մղչև տուն՝ գյուղի տունը: Էտ մարթը՝ էտ Սերգո անունով մարթը, երկար

մարթ ա ըլըմ հախթանդամ, երփ ուզըմ ա տանի տըռնիցը ներս մտնի՛, կըլիւիը կպչըմ ա չարսվի վիրի անկյունին, հենց որ վերի անկյունին՝ չարսվի, որ անկյունին կպչըմ ա հա՛, մա հենց իմանըմ ա, թե էտ ցախելը հեղհիցը հասվեհաս կյալիս ա ու խփեց ըտի, երկու ծեռով փոնըմ ա կըլխիցն ու ասըմ ա.- Վա՛յ, լածիրակ, հասար՛ էլի տվի՛ր:

3(186). ԿՈՂԱԼԱՆՏ ՍՈՒՄԲԱԹԻ¹ ԽՈՐԱԿԸ

Սի կյառունքվա զըրագի օր կեղի հըլիվոր-նին կանցիլարի պատի տակին ըրևաող ին արել: Էնքան տակից-կըլխից տուս ին տըլել, զրից արել, որ մաղարնին կտրել էր: Շատ որ լըխըղու արին, էն դուլիցը Ընրջանանց Ըռևազը թէ.- Արա՛, բոլ ա զանիւմ տանք է՛. վե կացեք կորչենք, սոված կըտորվեցինք, փորնիս վեց-վեց ա անըմ:

Բըլըմթառնց Սաքին էն դուլեն թէ.- Խի ըռ-վոտիս գատ չեք կերել՝:

- Արա՛, խի՞ չենք կերել.- էն դուլիցը վրա պիրուց Կոպալանց Սումբաթը.- Ես ըսօրի մի յա-ման խորակ եմ կերել:

- Արա՛, ագերա Սումբաթ, էտ ի՞նչ ես կերել.- Ես դուլա, էն դուլա վրա տըլվին հըլիվորնին:

- Սի յամա՛ն խորակ էր: Մեր պառազը ըռա-վոտը վեր կըցավ, մեր էն պըռունգը կտրած ծինգին կըրակին տրուց, փետաքըռլի ծերո-վը պուլկիցը մի թիքա յեղ հանց քըցեց մեղը, ճընջընստըրուց, ճընջընստըրուց, ճընջ-ընստըրուց, եղմա մի պուլոզ սողան էլ պիրուց կտորեց մեչը, ճընջընստըրուց, ճընջ-ընստըրուց, ճընջընստըրուց, կուլեն վե կա-լավ ճուրը քըլքըլաեն մի ածեց, էփե՛ց, էփե՛ց, էփեց, աղ քցեց, այանք քցեց, էլ ետ էփե՛ց, է-փե՛ց, էփե՛ց, էփեց, եղմա տաշտիցը մի երկու-իրեք ծաղկած հաց պիրուց, էն մեծ ղըմալթին քաշեց՝ ղըմարա-ղըմարա, ղըմարա-ղըմարա կըտորեց, պիրուց մեչն ածեց, մեր չալ հալի

¹ Կոպալանց Սումբաթը Իջևանի շրջանի Ուզուն-թալա (այժմ Այգեհովիտ) գյուղի զվարճախոսնե-րից էր, միևնույն ժամանակ փայլուն բանասաց (ծանոթ. բանահավաքի)

ծուն էլ պիրուց զանգեց վրեն ածեց, տառաձվ - մի յաման խորակ:

- Ի՞, քու հոր կըրկածընդ վե տամ,- էն դոլի-ցը վրա պիրուց Յըխվերորոնց Ըռաքելը,- դե էն ա ասա կոնջու ես լափել էլի:

4(187). ՏՆՈՆ ԱՎՈՓԸ

Մեր ապու-պապերից մինը, որի ավել ա-նունը Տառն Ակոփ էր, ու չիմ նրան հսնչոնց Տառն Ակոփ իմ ասըմ իրա անպետք բնավո-րության համար, մի օր աղունը պեռնըմ ա է-չին ու Սեքարից կառլիս՝ Ուսազվիի ճղղացընը աղալու հըմար: Ուսազվիիցի Ղիասանց Արսե-նը, որ ինքն էլ պակաս տառը չէր, լսել էր, որ հսնչոնց Տառը էլը ծախըմ ա:

Էտ օրը պըտահըմ ա, որ նա էլ ա ճաղացը քյնըմ, պըտահըմ ա ես սեքարեցուն, հարցընըմ ա.- Ղայի՞, ասըմ են՝ սեքարեցի հսնչոնց Տա-ռը Ակոփը ծախու էլ ունի, գիղըմ չե՞ս, տենաս լա՞վն ա:

- Դա՛, քե մատաղ, էլը լավն ա, շատ ա լա-վը: Էս ա աղունն աղանք պըրծենք, քյնանք՝ չիանց տամ, տեղն ասեմ:

Աղունն աղըմ են, երկուսով էլը պարցըմ ու իրար հետ ճամփա ընգընը դըբա Սեքար¹: Զրից ամիլով քյնըմ են, քյնըմ, գեջղանգեջ հասընը են Ակոփի տուն: Իշի պեռը վեր են տընըմ, խուրջինը տանըմ տուն, էլը տըռանը ծառիցը կապըմ, ըսի Տառն Ակոփը ասըմ ա.- Քե մատաղ, Տառն Ակոփը ես եմ, էլն էլ ես ծա-ռիցը կապածն ա, ծախըմ չեմ:

- Ա՛ դայ, բա խի՞՞ չի ճղղացընը ասեցիր, ես խի՞՞ ինձ տանջեցիր:

- Քե մատաղ, բա ո՞նց դի ամիլ, որ գիղա-ցել իր, որ Տառն եմ:

քյնըմ իրան կործի տեղը: Էլը ճըմփու դրաղին կապըմ էր, իրան պեռնին կենըմ:

Մի օր էլ ետ կառլիս տեղը Սեքարի միչովը անց կենալիս կեղըմիչի ճամփու դրաղի նա-խաղվընը մի քանի իրես առած մեծամեծեր կերովխում ին անըմ: Դենց որ հային տեհան, կանչեցին, մթամ թե պատիվ են անըմ: Դայը է-լը տըռան ստղուցը կապեց, մի մտավ: Լըս-տըցրին, որ պատիվ անեն:

Քեփչըքերիցը մինը ստաքանը վե կալավ ու.- Ա՛ հայ, ես խնըմ եմ քու պատվական իշի կենացը: Ստաքանը վե կալ տուլ էլ իշի կենա-ցը խմի:

Դայը իրան միչին նեղացավ, համա մտը-նը տրուց տրանց մի լավ նալնի: Ստաքանը ծեռը կալավ ու թե.- Ներող կըլեք, ես միչն հը-մի իմ իշին լավ չեմ ճըմանչել, հըմի եմ տենըմ, որ նա էլ պատվական էլ ա: Էս էլ եմ խնըմ իմ իշի կենացը, որ նրա թայութուլը սհենց անը-մով մըրթկեք են: Սաղ ըլեք, ծեր կենացը, իմ իշի թայութուլի կենացը:

6(189). ՈՐՑ ԽՈՁԻ ԿՅՈՆԻՆ

Մի օր հարգելի Տիգրան Խալաթովիչը Աը-ռիգեղիցը Սեքար էր գնըմ: Դենց որ եկավ Սե-քարա ծովի դրաղը հասավ, տեսավ մի ըրե-խա մի մեծ ու մի պուռուր խոզ ա ըրծոցընը: Ըստ իր մանկավարժական սովորության՝ ցան-կացավ երեխային դիտողություն անի և դիմեց նրան.- Աբալ ջան, էտ ո՞նց ա խոզըտ մի գոռի ունի:

Երեխան պատասխանեց.- Վարժապետ դայի, դե որք խոզը մի կյոռի էլ անջաղ ունենա էլի:

7(190). ՄՈՏԻԿ ՊԸՐԵԿԱՍԸ

- Այ ախճի՛ Վարթիշաղ, ըրուլունը էն ո՞վ էր եկել ծեր տուն:

- Ի՞, Յազգուլ ջան, մեր պըրեկամն էր:

- Ախճի, էտ ո՞նց պըրեկամ ա, որ ես ճըման-ջըմ չեմ:

5(188). ԱՐՈՒԿԵՂՑԻ ԴԱՆԵՍԻ ԷԸԸ

Արոիկեղցի Դանես ապին երգար վախտ ճամփեքի ուստա էր: Ինքն էր ու իրա միմու-նար էլը: Ամեն ըռավոտ էլը աղաք էր անըմ

¹ «Զմոռանամ ասել, որ այդ տարածությունը 8 կմ-ից ավելի է» (ժանոթ. բանասացի):

- Դա՛, բա, մեր մոտիկ պըրեկամն ա: Մեր հարսի մորթի տեղըր բաջանաղի հարսի եզամ կեղիցն ա:

8(191). ԼՊՈՍՏՐԱԿԻ ՃԵՐԻ ՃՈՒՐԸ

Մեր կեղացի Մատինանց Պատվականը ֆորսկան էր: Մի օր ասցի.- Արա Պատվական, ե՛սի դես ֆորսի դոնաղ անիլ:

Ասեց.- Լպոստրակ ունեմ, արի քյնանց լպոստրակի դոնաղ անեմ:

Քյնացինք տըռան թախտի վրա նստեցինք, մընէլ տենամ էտ կըլխամեռը մի ջամ ծուր պի-րուց դաքիս տըրուց:

- Ա՛ գերա,- ասեցի,- էս ի՞նչ ա:

Թե.- Լըպոստրակի ճըրի ծուրն ա:

9(192). ՄԱԿԱՆՏ ՍԱՔՈՅԻ ՄԱՍԻՆ

Մեր Աշխենին, Մակնանց Աշխենին¹ էլի, մի ախպեր ուներ՝ Սաքոն: Դե Մակնանց Սաքոն գյուղի ամենա խելը պակաս մարթն էր հա-մարվըմ, տարեն տաստերկու ամիս սըրու-նըրու տավարն էր գնըմ, մենք էլ սարընը տավարած ըրեխեք ինք, Սաքոն էլ մեծ մարթ էր, էտ խելը՝ մարթին օր ու գյամը չինք տալիս: Էտ կըլխա-մեռ Պահլավն² էլ սովորացնըմ էր մեզ՝ Սաքո-յին նեղացնել:

Նույնիսկ էնպես պատահեց, որ Սաքոյին մի անքամ ճըվալը մըտցորինք: Խափեցինք, թե՛ ո՛վ կարա ջըվալը մտնի, Սաքոն, թե.- Ես կմտ-նեմ:

Դենց մտավ թե չէ, ջըվալի պերանը կապե-ցինք: Դմի Սաքոն ջըվալի միջին ա՛ Սամսոնա

¹ Մակնանց հին դիտավանցիներ էին, որոնց ըն-տանիքից գյուղում ոչ-որ չի մնացել և, ցավոք, նրանց ազգանունը ես չգիտեմ: Մակնանց Աշխենն ամուսնացած է եղել Բայրամյան Գարեգինի հետ: Աշխենը շուտ է մահացել: Մահվան պատճառը ե-ղել է դեղահաբերի դոզան խախտելը: Նրա զա-վակներն ու հետմորդներն ապրում են Դիտավա-նում (ծանոթ. բանահավաքի):

² Խոսքը դիտավանցի ուսուցիչ Պահլավ Գրիգորի Մանուշարյանի մասին է, որը ծնվել է 1903 թ. և ապրել է 97 տարի: Այս նկարագրած դեպքը հա-վանաբար տեղի է ունեցել մինչև հեղափոխու-թյունը (ծանոթ. բանահավաքի):

դիշուվը թու ենք արել: Քյնըմ ա՛, թըմփալով տալի կեծաններըմը, ծուլ ըլըմ, մընէլ ներքի կածանըմ տալի, զըխկոցը վեր ա ըլըմ: Վերջը հասավ... քյնացինք հանեցինք, Սաքոն որդի՛:

Ըտենց խեղճի գլխին ինչ օյին ասես հանըմ ինք, քաշ-քաշ ինք անըմ, Պահլավն էլ գալիս էր մեզ վրա բարկանըմ, թե.- Ի՞նչ եք ուզըմ էտ մարթիցը, ընչի՞ չեք խելը կենըմ, մեծ մարթ ա:- Ետ դառնըմ Սաքոյին, թե.- Սաքո՛, տենըմ ե՛ս, ասըմ ա,- էս լակոտնին ինչ են անըմ, ես քեզ պաշտպանըմ եմ:

- Ի՛, տու ե՛ս պաշտպանըմ,- ասըմ ա,- մեծ շուրը տու ես՝ մեծ շուրը:

10(193). ԱՊՏԵԿԻ ԿՈՆԴԻԿՈՐՍԸ

Քյնացի շուկան, որ իրանից՝ Դրաչիկիցը, կոնդիկորմ առնեմ էլի, կովերը սոված ին: Էտ ա ըտիան, ա՛ բալ ջան, տա՛ ասեց, թե.- Քըռա-կին, ապտեկն ըստացել ա, ըստիան հետ լի-քը՞:

Դե էտ Թամարն էլ մեզ հետ մոտիկ ա՛՝ էտ ապտեկի ախճիկը: Էտ ա քյնացի, ասեցի.- Թամար ջան, մըթիք կոնդիկորմը տու:

Ասեց.- Տրա՛ դրգիդը բեմուրազ ըլի, բա մեզ կոնդիկորմը ունե՛նք:

Էտ ա էլը ըտի կապած հիլ արի, քյնացի շուկան, որ տենըմ ա, շուկան եմ մտնըմ, ինքն էլ միս ա ծախըմ, հիլ ա անըմ ու կորչըմ: Քյն-ացի տղերանցը ասեցի.- Ա բալ ջան, էս ո՞րդի քյնաց էտ բեմուրազը:

Թե.- Բաքո՛ ջան, ծախեց ու կորավ, քյնաց: Տուըը պոցեց, տեսավ կայլիս ես:

Դե գիղըմ ա, որ կռիվ դեմ քցիլ:

Էտ ա օրերի մի օրը մեր խամուրթի տըռան - պըտցիցըրի.- Ա՛ քու հոր ըռիսին ք...եմ, էս քո ըռեխեն ի՞:

Ասըմ ա, թե.- Ես պարտյականի⁴ տղա եմ,- ասըմ ա,- քըռակին, բա քեզ կխափե՞մ:

Ասցի.- Դու՛ քու հերը, հու՛ մեր էլը, քեզ դայ-դի մեր էլն էլ ա պարտյական՝ քու հոր դայդի:

³ Բանասացը ձեռքով ցույց է տալիս, թե որքան է կոմբիկորմի ենթադրյալ չափը (ծանոթ. բանահա-վաքի):

⁴ Պարտյական (ռուս. партовый) - կուսակցա-կան, նկատել է առնված կոմունիստական կուսակ-ցուրյունը (ծանոթ. բանահավաքի):